2588

203.7
Z-21

1685 13 հատ 470-1
17 SEP 2009
203.7
Հ-21
280
Ա-ԺԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԺԱՄԱԳՈՒՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏՊԱՐԱՆ «ԱԶԳ»Ի
ՊՈՍԹՈՆ, ՄԷՍ.
1916

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

280
798-ԺԱ

ՀԱՄԱՌՕՏ ԺԱՄԱԳԻՐՔ

20057

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏՊԱՐԱՆ «ԱԶԳ»Ի
ՊՈՍԹՈՆ, ՄԷՍ.
1916

3 1 MAY 2013

2588

Յար. քահ. Նշան
Էֆտ
Ցուցանակի

Jul 30. 1916
34 P.O. Box Sta
Boston Ma
U.S.A

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Ե.Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կարեւոր պահանջի մը կարելիութեան սահմանին մէջ գոհացում տալու արդար գիտակցութեամբ կը ձեռնարկեմ սոյն հրատարակութեան։

Համառօտ և ամփոփ ԺԱՄԱԳԻՐՔ մըն է ասիկա, ուր եկեղեցասէր հայեր պիտի գտնեն, սովորական ժամասացութեան կարեւորագոյն մասերէն զատ, նաև՝ ՊԱՏԱՐԱԳԻ, ԾՆՆԴԵԱՆ, ու ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒ և ԶԱՏԿԻ, ինչպէս նաև Մեծ Պահոց ԱՐԵՒԱԳԱԼԻ երգերը, և այլն։

14 Յուլիս 1916
Պոսթոն, Մէս.

Հրատարակիչ
ՅԱՐ. Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄԱՍՆԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ԱՌՅԻՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ

Քհնյ. Օրհնեալ Տէր մեր Յս. Քս. ամէն:

Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Սրկ. Օրհնեալ է Աստուած:

Քհնյ. Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Սրկ. Օրհնեալ է Աստուած:

Քհնյ. Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի Սուրբ, այժմ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան:

Քհնյ. Օրհնութիւն և փառք:

Դպ. Տէ՛ր, զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ:

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չի՛ք փրկութիւն սորա առ Աստուած իւր:

Այլ դու Տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ:

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:

Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է:

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, որք չուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի՛ Տէր և փրկեա՛ զիս, Աստուած իմ, զիդ ու հարեր զամենեսեան, որք էին ընդ իս թշնամու-

թեամբ, ի տարապարտուց, և զատամունս մեղաւորաց փշրեսցես:

Տեառնդ է փրկութիւն՝ ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո:

Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի և ի մեռեալս ազատ:

Որպէս զվիրաւորս որք ննջեն ի գերեզմանս:

Զորս դու ո՛չ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս ի գրի ներքնումն ի խաւարի և ի ստուերս մահու:

Ցիս հաստատեցաւ սրտմտութիւն քո զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց:

Մատնեցայ և ո՛չ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Միթէ մեռելոց առնիցե՞ս զսքանչելիս քո կամ բժիշկք յարուցեալ խոստովան առնիցին առ քեզ:

Միթէ պատմեսցէ՞ ոք երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Միթէ ճանաչիցե՞ն ի խաւարի սքանչելիք քո,

կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն:

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ:

Ցիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս:

Շրջեցան զինեւ որպէս ջուր, զոր ամենայն պաշարեցին զիս ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ:

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա:

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա:

Ո՛ քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո:

Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ:

Ո՛ լնու ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո:

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոց:

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, և որդւոցն Իսրայելի զկամս իւր:

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ:

Ո՛չ խսպառ բարկանայ մեզ Տէր, և ո՛չ յաւիտեան պահէ ոխս:

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, և ո՛չ

ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի Տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Շնչէ ի նմա հողմ, և ո՛չ է, և ո՛չ եւս երեւի տեղի նորա։

Բայց ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս։

Ոյք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ, ոյք առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն գործք նորա, զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա, օրհնեա՛ անձն իմ զՏէր։

Տէ՛ր լուր աղօթից իմոց, ունկնդի՛ր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ

ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր, կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր, ևն.։

— · —

ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Ցիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո, ի մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր:

փ. Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք, և ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. ալէլուիա:

Զարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:

Զարթի՛ք փրկեալք արեամբ, և տուք զփառս փրկողին. ալէլուիա:

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա:

Զարթի՛ք, հարսունք հոգւով, սպասեալք գալոյ սուրբ փեսային. ալէլուիա:

Զարթի՛ք, վառեալք լուսով, ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալէլուիա:

Զարթի՛ք, պատրաստեցէք իւղ լապտերաց զՔրիստ արտաքուս. ալէլուիա:

Զարթի՛ք, և մի՛ ննջէք, նման յիմար կուսից նիրհէք. ալէլուիա:

Զարթի՛ք, երկիրպագուք, և արտասուօք զայս ասացուք. ալէլուիա:

փ. Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես, Տէր, մի՛ մերժեր զմեզ իսպառ:

Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, տացուք անուանդ քում զփառս:

Այժմ և յաւէտ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ամէն:

փ. Զարթուցեալքս, ի զբաղմանէ գիշերային հանգստենէ:

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր ի մխիթարութիւն և ի սփոփանս Եկեղեցւոյ:

Ահիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ գոցուք ի Քրիստոսէ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն: Ամէն:

Գկ. Կցորդ. Անբաժանելի և համագոյ Երրորդութեանդ. համաձայնեալք ընդ զօրս երկնից. փառս մատուցանեմք:

Փա՛ռք քեզ: Որ յանարուեստ յաթոռ բարձրացեալ հանդչիս. Սո՛ւրբ Աստուած, հզօր և սքանչելագործ:

Փա՛ռք քեզ: Որ յանէից գոյացուցեր զամենայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, անճառ Հօր անեղ Որդի:

Փա՛ռք քեզ: Որ տեսչութեամբ խնամես զամենայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, Բղխումն անբսպառ աղբեր:

Տէ՛ր: Ժողովրդապետք Եկեղեցւոյ՝ 'ի քո հայցեն ասելով. Հովիւ բարի, ողորմեա՛ բանաւոր հօտի:

Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:
Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

—.—

ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա: Բղխումն ի հօրէ, բղխեա ի հոգւոյս, բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գտող զիս արա: Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոցն:

Երբեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա: Զարթիր Տէր յօգնել, զարթո զթըմբեալս, զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի: Ընկալ զիս զթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տուող, թո՛ղ ինձ զյանցանս: Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժըշկութիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող, խաւարիս չնորհեա, խորհուրդ լուսաւոր: Ծնունդ հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա լոյս փառաց:

Կենարար Փրկիչ, կեցո զմեռեալս, կանգնեա զգլորեալս: Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով:

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց չնորհեա: Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, զղեալս ամրացո:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս: Միածինըդ հօր, մոյծ զիս յառաջաստ, մաքուր հարսանեացդ:

Յորժամ դաս փառօք, յահագին յաւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց, չնորհեա զքաւութիւն, չնորհեա զթողութիւն: Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:

Զար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն: Պարգեւիչ բարեաց, պարգեւեա իմոց, պարտեացս թողութիւն:

Զուր չնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտասր, ընջել զյանցանս: Ռետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա, սիրտ իմ քարեղէն: Վասն գթութեան, վասն ողորմութեան, վերստին կեցո:

Տենջալոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս: Բարունդ երկնաւոր, բոտեա զաշակերտս, բամից երկնայնոց:

Ցօղ արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս, ցնծասցէ անձ իմ: Իւծեալըս մեղօք, իւծեալ աղաչեմ, ւիւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս, քեզ երգել զփառս:

Աստուածածնին բարեխօսութեաբ յիշեա, Տէր և ողորմեա:

ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅ ԵՒ ՅԱՒՈՒՐՍ ՊԱՀՈՅ

Աչխարհ ամենայն, առ իս նայեցեալ, ախտակից լերուք: Բանամ զչրթունս, բարբառիմ լեզուաւս, բողոքեմ զանձնէս, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Գող եղէ մեղաց, գողդ կորսուեան, գուբ ինձ փոբեցի: Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի, դարան գործեցի, Տէր ողորմեա, ևն:

Երբեմն էի լոյս, և այժմ եմ խաւար, և սուուեր մահու: Զխարդ պատմեցից, զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ, Տէր ողորմեա, ևն.:

Էրկինք և երկիր, եկայք ողբացէք, եղկելի զանձն իմ: Ընարեցի զչարն, ընկալայ կամաւ, ըզհոյլս մեղաց, Տէր ողորմեա, ևն.:

Թաթաւիմ տղմով, թաւալիմ ի մեղս, թոթափիլ չկարեմ: Ժանտախտիւ լցեալ, ժահահոտ եղէ, ժամանակս բազումս, Տէր ողորմեա, ևն.:

Ի բաց մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց, ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ անձն իմ, լուսոյն հեռանալ, լինել ընդ խաւար, Տէր ողորմեա, ևն.:

Խորհուրդքք չարին, խաբեն զհոգիս, խորասոյզ առնեն: Ծածկեն անդնդօք, ծիծաղին գլորմամբ, ծանակ զիս առնեն, Տէր ողորմեա, ևն.:

Կամաւ կորացայ, կարկամեալս անձամբս, կանգնիլ ո՛չ կարեմ: Հուր մեղաց կիզող, հրդեհեաց որ յիս, հոգեւոր բարիս, Տէր ողորմեա, ևն.:

Զաղկեցայ մեղօք, ճաղեցին տեսողք, ճանճբացաւ հոգիս: Ղեղի դառնութեան, զողեալ ի

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրային Գրադարան
7/XI 1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

սիրտ իմ, զամբաղ կամ ելեալ, Տէր ողորմեա, ևն.:

Ճաշակմամբ մեղաց, ճաշեցի դիպաւ, ճոխս աղքատացայ: Մեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մրտօքս, միայն կամ մարմնովս, Տէր ողորմեա, ևն:

Յորոգայթ մահու, յորսողին անկայ, յաղթեցայ յախտից: Նետից թշնամւոյն, նշաւակ եղէ, նոր միշտ խոցոտիմ, Տէր ողորմեա, ևն.:

Շուրջ պատեալ զինեալ, չունք բազումք եղեն, չաղախին արեամբս: Որս եղէ չարին, ուռկանաւ մեղաց, որսացաւ զանձն իմ, Տէր ողորմեա, ևն.:

Զարաչար վշտօք, չարչարի անձն իմ, չունիմ դադարումն: Պարտապան գտայ, պարտուց յանցանաց, պարտեալս ի մեղաց, Տէր ողորմեա, ևն.:

Զանամ զղջանալ, ջեռանիմ դարձեալ, ջեռնում հրով մեղաց: Ռաբբի կոչեցայ, ռակայ անուանիմ, ռամկական վարուքս, Տէր ողորմեա, ևն.:

Սիրով ցանկութեան, սաստիկ բարկութեան, սիրտ իմ խոցեալ է: Վիրօք յանցանաց, վշտանայ հոգիս, վարանեալ չըշիմ, Տէր ողորմեա, ևն.:

Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին, տիրական գրկացն: Բաբունւոյն բարւոյ, բախճական ձայնին, բոտինս ո՛չ լուայ, Տէր ողորմեա, ևն.:

Ցանկութիւն չարեաց, ցանկալի դիմօք, ցաւեցոյց զաչս իմ: Իւրաքանչիւրոց, ւիւսմամբ խուռն ախտից, ւիւծեալ է հոգիս, Տէր ողորմեա, ևն.:

Փութացիր անձն իմ, փախչիլ ի չարեաց, փափաքիլ բարեաց: Քեզ միշտ մերձ ծանիր, քուն

1005
2003

մահու եկեալ, քննող դատաւոր, Տէր ողորմեա, ելն.:

Աստուածածնին բարեխօսութեամբ, յիշեա Տէր և ողորմեա:

Քհնյ. Զքէն զոհանամք, ելն.:

— . —

Կանոնագրութիւ կարգաւ ըստ ՈՒԹ ձայնիցն

Ա. Դատեա՛ Տէր զայնոսիկ, ոյք դատեն զիս, ալէլուիա: Մարտիր ընդ այնոսիկ, որք մարտընջին ընդ իս, ալէլուիա:

Առ զզէն և զասպար քո և արի՛ օգնել ինձ, հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա, և ասա դու զանձն իմ թէ փրկութիւն քո ես եմ, ալէլուիա:

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խնդրէին զանձն իմ, դարձցին յետս և ամաչեսցին ոյք խորհէին ինձ չար:

Եղեցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ, և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա:

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթակղութիւն և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա:

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ ապականութեան իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ:

Փ. Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչեւ յամպս, ալէ. ալէ.:

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած,

իրաւունք քո որպէս խորք բազում, զմարդիկ և զանասունք կեցուցանես դու Տէր, ալէ.:

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած, այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց քոց յուսասցին:

Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քո, և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա:

Ի քէն է Տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն, զքեզ, զարդարութիւնս քո ոյք ուղիղ են սրտիւք:

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն, մերժեսցեն և այլ մի՛ կարասցեն հաստատել:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

— . —

Ակ. Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ո՛չ գոյ Աստուած, ալէլուիա: Ապականեցան և պղծեցան յանօրէնութեանց իւրեանց, և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն, ալէլուիա:

Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱստուած, ալէ.:

Ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան:

Ո՛չ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչեւ ի մի:

Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան ոյք գործեն զանօրէնութիւն:

Այք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, և առ Աստուած ո՛չ կարդացին:

փ. Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ո՛չ երկեան յԱստուծոյ, ալէ. ալէ.:

Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, և նոքա պղծեցին զօրէնս նորա:

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա, և եհաս ի սիրտս նոցա:

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեան որպէս սլաք:

Ընկեա՛ ի տէր զհոգս քո և նա կերակրէ զքեզ, և ո՛չ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ:

Դու Աստուած իջուցես զնոսա ի գուբ ապականութեան, արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց, այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

— . —

Բձ. Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան, ալէլուիա: Յարդարութեան քում փրկեա և ապրեցո զիս, ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և կեցո՛ զիս:

Լեր իմ Աստուած ապաւէն, և տեղի ամուր կեցուցանել զիս, զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես:

Աստուած իմ, փրկեա՛ զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անօրինի և անիրաւի:

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ:

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ յորովայ-

նէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ:

փ. Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա, ալէ. ալէ.:

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն, որոյ ոչ է իւր օգնական:

Անխայեսցէ նա յաղքատն և ի տնանկն, և զանձինս տնանկաց կեցուսցէ ի վաչխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա:

Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տացի նմա յոսկւոյն արաբացւոց:

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհանապազ օրհնեսցեն զնա:

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց:

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա, և ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա:

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ առնէ սքանչելիս միայն, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան, լցցի փառօք նորա ամենայն երկիր եղիցի եղիցի:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

— . —

Բկ. Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից ալէլուիա: Ազգէ յազգ պատմեցից զճշ-

մարտութիւնս քո բերանով իմով, ալէլուիա:

Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ չինեսցի, յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո:

Եղի ուխտ ընտրելոց իմոց, երդուայ Դաւթի ծառայի իմոյ:

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո և չինեցից յազգէ յազգ զաթոռ քո:

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց:

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ, կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ:

Փ. Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա, և ո՛չ ընկալար զնա ի պատերազմի, ալէ. ալէ.:

Անարգեցեր զսրբութիւն նորա, և զաթոռ նորա յերկիր կործանեցեր:

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հեղեր զնովաւ զամօթ:

Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո խպտառ, բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո:

Իսկ արդ յիշեա՛ և տե՛ս թէ ո՛վ է իմ հանգիստ, միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան:

Ո՞վ է մարդ որ կեցցէ և ո՛չ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով:

Յիշեա զնախատինս ծառայի քո, զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախատեցին փոխանակ օծելոյ քո:

Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

—— . ——

Գ. Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, ալէլուիա: Զի յաւիտեան է ողորմութիւն նորա, ալէ.:

Ո՛ խօսեսցի զզօրութիւնս Տեառն, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա:

Երանի ոյք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւն յամենայն ժամ:

Յիշեա զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո, և այց արա մեզ ի փրկութեան քում:

Տեսցո՛ւք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց, ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո, և գովիցուք մեք ի ժառանգութեան քում:

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք:

Փ. Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց, տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա, և խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա, ալէ. ալէ.:

Բազում անգամ փրկեաց զնոսա, և նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց, և կորացան յանօրէնութեան իւրեանց:

Հայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա, ի լսել ձայնի աղօթից նոցա:

Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում, և ետ զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա:

Փրկեա՛ զմեզ Տէր Աստուած մեր, և ժողովեա զմեզ ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ, և պարծեսցուք յօրհնութիւնս քո:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, յաւիտեանս յաւիտենից:

Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն, եղիցի եղիցի:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

—— . ——

Գկ. Արարի իրաւունս և արդարութիւն, ալէլուիա: Մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց, ալէլուիա:

Ընկալ զծառայս քո ի բարի, զի մի՛ ամբարտաւանք զգուեսցեն զիս:

Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր, և բանից արդարութեան քում:

Արա՛ ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում զարդարութիւնս քո ուսո՛ ինձ:

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:

Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո:

Փ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս, ալէ. ալէ.:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր և բանիւ քո փրկեա զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

—— . ——

Դձ. Օրհնեա անձն իմ զՏէր օրհնեցից զՏէր ի կեանս իմ, ալէ.: Սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես, ալէ.:

Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան, զի ո՛չ գոյ փրկութիւն ի նոսա:

Ելցէ հոգի ի նոցանէ և դարձցին անդրէն ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա:

Երանի՝ ազգի որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա, և յոյս նորա ի Տէր Աստուած է:

Ո՛ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա:

Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւիտեան, և առնէ իրաւունս զրկելոց:

Փ. Գովեա Երուսաղէմ զՏէր, ալէ.:

Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն:

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ո՛ եղ զսահմանս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ յցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա:

Դնէ զձիւն որպէս զասր և զմէգ որպէս փոշի ցանեաց:

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայելի:

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա:

Փառք Հօր· Այժմ և միշտ· Ալէ· ալէ·:

— · —

Դկ· Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ, ալէ·: Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ, ալէ·:

Աստուած օգնական իմ, և ես յուսամ ի նա, ապաւէն իմ եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է:

Օրհնելով կարդացից առ Տէր, և ի թշնամեաց իմոց ապրեցայց:

Շուրջ եղեն զինեւ երկունք մահու, և ուղիք անօրէնութեան խռովեցուցին զիս:

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս, և ժամանեցին ինձ որոգայթք մահու:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի:

Փ· Զգեցուցիր ինձ զօրութիւն ի պատերազմի, և զյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ իմ արարեր, ալէ· ալէ·:

Զթշնամիս իմ հալածական արարեր և զատելիս իմ սատակեցեր:

Աղաղակեցին և ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա, կարդացին առ Տէր և ո՛չ լուաւ նոցա:

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ, և որպէս կաւ գռեհաց կոխեցից զնոսա:

Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ ժողովրդոց, և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց:

Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայեաց ինձ, և ի լուր ականջաց լուաւինձ:

Որդիք օտարաց ստեցին ինձ, որդիք օտարաց մաշեցին և կաղացան ի շաւղաց իւրեանց:

Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած, և բարձրը եղիցի Աստուած փրկութեան իմոյ:

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ որք յարուցեալ են ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս, և յառնէ յանիրաւէ փրկեցեր զիս:

Վասն այսորիկ՝ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասացից:

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա, առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա Դաւթի և ընդ զաւակի նորա յաղագ մինչեւ յաղագ:

Փառք Հօր· Այժմ և միշտ· Ալէ· ալէ·:

— · —

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

ՍԱՂՄՈՍՔ ԸՆԴ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

Ի տէրունի աւուրս եթէ ձայնն ած է, ասա զայս

Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում, կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ո՛չ արար:

Նախատինս ի մերձաւորաց նա ո՛չ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործն:

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ:

Զարծաթ իւր ի վարձու ո՛չ տայ, և կաշառս ի վերայ իրաւանց ո՛չ առնու, որ զայս արասցէ նա մի՛ սասանեսցի յաւիտեան:

—— · ——

Սաղմոս ա՛ա. Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ և դու Տէր մինչեւ յե՞րբ:

Դա՛րձ Տէր, և փրկեա՛ զանձն իմ, կեցո՛ զիս Տէր ըստ ողորմութեան քում:

Զի ո՛չ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ:

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուա-

ցի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իժովք զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն:

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն և խռովեսցեն յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին:

—— · ——

Սաղմոս ակ. Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս և ո՛չ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս, Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ և փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ:

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա, և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանդիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն:

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ո՛չ սասանեցայց յաւիտեան:

Տէր ի կամս քո եառուր գեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն և ես եղէ խռովեալ:

Առ քեզ Տէր կարդացի և առ Աստուած իմ աղաղակեցի, զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ թէ իջանեմ ես յապականութիւն:

Մի՞թէ հող խոստովա՞ն առնիցէ առ քեզ, կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, եղերգ յինէն զքուրձ և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի՛ եւս զղջացոյց, Տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ։

—— · ——

Սաղմոս բԺ. Աստուած յանուան քում կեցս զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուա՛ծ, լուր աղօթից իմոց, ունկնդի՛ր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիսն իմ, ճըշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում Տէր զի բարի է։

Ցամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եսես ակն իմ։

—— · ——

Սաղմոս բԿ. Աստուած ողորմեա՛ մեզ և օրհնեա զմեզ, երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգինս ամենայն զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ, Աստուած Աստուած մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

—— · ——

Սաղմոս գԱ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո։

Դա՛ր առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ զսրտմտութիւնս քո ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր, և մի ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչեւ յազգ։

Աստուած՝ դու դարձեալ կեցուցես զմեզ, և ժողովուրդք քո ուրախ եղիցին ի քեզ։

Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։

Լուաք զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր և առ այնոսիկ ոյք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակիլ փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր, արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։

—— · ——

Սաղմոս գկ· Տէր՝ լուր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոտ չորացան։

Հարայ ես, որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ՝ ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալասան անապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինեւ երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ։

Դու յարուցեալ զթասցիս՝ ի վերայ սիօնի ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամ։

—— · ——

Սաղմոս դձ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցին աղօթք իմ առաջի քո Տէր և բանիւ քո փրկեա՛ զիս։

Բղխեսցին շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո։

Թօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

—— · ——

Ի տէրունի աւուրս ԼԹԻ ձայնն գկ· Ե, ասա զայս

Դկ· Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր, Տէր իսկ ո՛ կարէ կալ առաջի քո զի ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի Տէր, համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ երեկոյ, ի պահէ յառաւօտու յուսացաւ Իսրայել ի Տէր:

Ի Տեառն է ողորմութիւն բազում, ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զԻսրայել յամենայն նեղութեանց նոցա:

—— · ——

Սաղմոս դկ· Տէ՛ր լուր աղօթից իմոց, ունկընդիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի գուբ:

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ, յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեաց զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

—— · ——

Զկնի սաղմոսին աւետարան և ապա երգ ըստ ձայնի

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Ակ· գկ· Ճանապարհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց, հրաւիրեցեր զորդիս լուսոյ ի յերկնային հարսանիս քո, ընդ զուարճալից անդ ժողովոց· արժանացս զսա դասուց, լի լապտերօք մոյծ յառագաստ ըստ իմաստուն սուրբ կուսանացն:

Մերով բնութեամբ զոր զգեցար ի փայտ խաչին բեւեռեցար, լուծանելով զմեզ ի մեղաց ի նախահօրն կապանաց, լոյծ և զսա ի յանցանաց վասն քո սուրբ չարչարանաց, լի լապտերօք ելն· :

Յետ կամաւոր մահու խաչի եղար ի նոր գերեզմանի, երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ըստեղծեր զմեզ կենդանի, զիջեալս ընդ քեզ ի հոգ մահու, վերադոյչեա ձայնին փողոյ, լի լապտերօք ելն։։

Ա. գ. Ոահ գործեալ երկնաւորաց՝ զան առաջի քո նախընթաց, զընտրեալս քո ժողովելով զեզ ընդ առաջ բերեն ամպով, ընդ աղաւնեաց օդապարից խառնեա զսա սուրբ երամից, զասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ զուարթնոցն։

Սարսափին տարերք յերկրի՝ յորժամ փառօք դաս հայրենի, արեգական լոյս խաւարի լուսինն աստեղբքն նուազին, զսա յաւուրն անելեկի լուսաւորեա լուսով քոյին, զասաւորեա ելն։։

Բկ. դկ. Աստուած անեղ, անժամանակ, Հայր անսկիզբն և անքանակ, որդւոյ պատճառն ծնընդեամբ անճառ, հոգւոյն բղխմամբ անքննարար, աղաչեմք զքեզ զթած, երկայնամիտ և ողորմած, ողորմեա քո ստեղծուածոյս՝ յաւսով ի քեզ ննջեցելոց։

Բանդ որ ի ծոց հօր միածին, և կերպարան սկզբնատպին, որով երկինքը զոյացան, աշխարհ լրիւ հաստատեցան, հայցեմք ի քէն Տէր և Փրկիչ ամենողորմ և կեցուցիչ, ողորմեա ելն։։

Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւորաց և երկրայնոց, կեանք և կենաց տուող հոգի, Հօր և Որդւոյ աբարչակից, խնդրեմք ի քէն աղբիւր բարեաց մրբուցանողդ ծարաւեաց, ողորմեա ելն։։

Բն. դն. Ժողովեալքս ի հրաժարումն ծառայի քո յաշխարհէ, հայցեմք ի քէն արտասուելով և

պաղատիմք զայս ասելով, ճանապարհ ընդ քեզ ելից՝ հանգուցելոյս լեր ուղեկից, ի յօթեւանս հօր քո լուսոյ զննջեցեալսն մեր հանգո։

Ի փրկութեան մերոյ սկզբան մկրտեցար ի Յորդանան, զոր շնորհեցեր նոր աւազան ի մաքրութիւն մեզաց մարդկան, հայցմամբ կրկին կարապետին մեծին ի ծնունդս մկրտչին, ի յօթեւանս ելն։։

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ զաւանեաց հայր էակից, աղաւնակերպ հոգին իջեալ առ համագոյդ իւր հանգուցեալ, զմկրտեալս նովին հոգւով յորդեգրութիւն հօր հաւատով, ի յօթեւանս ելն։։

Դն. Զէակիցդ հօր զորդի, փառաւորեմք անլռելի, որ իջեր յարգանդ կուսին, զաղամային առեր մարմին, աղաչանօք Աստուածածնին, անապական քում ծնողին, ողորմած Տէր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։

Թագաւոր փառաց Քրիստոս որ ժամանեալ դաս ի յերկնից ի վերայ թեւոց հողմոց քո հայրենի կերպարանօք, և առնես հրաշագործութեամբ զքննութիւն որդւոց մարդկան, ողորմած ելն։։

Ուրախացան ազգքք մարդկան յորժամ լուան զքո յարութիւնդ, նորափեսաւր զարդարեցան ի յարութեան սուրբ միածնիդ, ողորմած ելն։։

Վերնական զօրացն պետ փողէ բարբառ աւետարբեր, արիք մեռեալք որք յԱդամայ քանզի ահա եկն փեսայ, ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կարգեա զսա ի թիւ սրբոց, զասաւորեա ելն։։

— · —

ԱԼԷԼՈՒՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԱԿԷԻՑ

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

Ա՛ձ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան: Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

Ալէ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Ակ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր բարձրեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի:

Ալէ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Բձ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Ալէ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Բկ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Ալէ. Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանունն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ միչեւ յաւիտեան:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Գձ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Ալէ. Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիօն: Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Գկ. Օրհնեցէք մանկունք զՏէր և օրհնեցէք զանունն Տեառն: Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Ալէ. Կենդանի է Տէր, և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ: Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ և հնազարդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Դձ. Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիօն: Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ալէ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր բարձեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Դկ. Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ: Աստ-

ւած է որ խնդրէ զվրէժ իմ և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Ալէ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր բարձեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ, ալէ.:

—— . ——

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան: Օրհնեցէ՛ք, մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան: Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն: Ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան:

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան:

Դպ. Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, և փրկեա զմեզ, վասն անուան քո:

Արի՛ և մի՛ մերժեր զմեզ խսպառ, վասն անուան քո:

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան՝ Աստուած քո Սիօն, յազգէ յազգ:

Օրհնեա՛, անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ:

Դպ. Օրթի՛:

Քհնյ. Խաղաղութի՛ւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Դպ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհնյ. Սրբոյ Աւետարանիս որ ըստ,

Դպ. Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:

Դպ. Պատսխանէ՛:

Դպ. Ասէ Աստուած:

Դպ. Փա՛ռք յարութեան քո, Տէր, ո՛չ դադարեցայց Քրիստոս, օրհնեալ զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

—— . ——

Փա՛ռք յարութեան քո, Տէր, ո՛չ դադարեցայց Յիսուս, գովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ի զիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր:

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն՝ զՏէր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր:

Լուսապայծառ հրեշտակն՝ նստելով ի կենսատու գերեզմանին: Եւ աւետէր կանանց. յարեաւ Աստուած:

—— . ——

ԵՐԳ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՒՐԱԿԷԻՑՆ

(Երիցս կրկնեա՛ և զյետինն բարձր ասա)

Զամենայն աւուրս կենաց իմոց, ես ո՛չ դադարեցայց օրհնեալ զքեզ, Քրիստոս, փրկիչդ աշխարհի:

Զամենայն աւուրս։ (Կրկնէ)

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։

Գալատեան. Դասք լուսեղէն զուարթնոցն սպասէին մեծի գալստեան Տեառն։ Եւ երգէին երգ նոր, օրհնեալ է քո սուրբ գալուստդ։

Համբարձման. Համբարձէ՛ք իշխանք, զդռունս ձեր ի վեր։ Եւ գայ մտանէ փառօք ի փառս։

Հոգեգալստեան. Իջեալ հոգին յառաքեալսն և հրաշինեաց զընտրեալսն անկեղծ ի սուրբ վերնատունն, և հանգեաւ նոքօք յաղգս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ։

Վարդավառ. Ցնծայ Թափօր Հերմոնիւ, և առաքեալքն ի հայրական ձայնէն թմբեալք։ Եւ կենդանեաց և մեռելոց տէր ծանուցին զքեզ Մովսէս և Հեղիաս։

Խաչ. Այսօր եկեալ կամաւ Տէրն ի խաչ, և տարածեաց զբազուկս իւր ի նմա։

Ծննդեան. Հոյլք հողեղէնք ընդ հովիւսն քարոզէին ի յանբանից մըսուր զբանըն բազմեալ։ Եւ մոգքն աստեղքն գուշակեալ մատուցին զընծայսն խորհրդոյ։

Տեառնընդառաջ. Քառասնօրեայ տղայ և Տէրն օրինագիր տնօրինարար եկն ի տաճարն։ Եւ Սիմէօն գգուէր գբրկօքն. և յօրինաց կապից լուծումըն հայցէր ի կեանս աւետարանի։

—— · ——

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՒՕՏՈՒ

Գկ. Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած և Հայր անմենակալ։ Տէր և որդի հօր միածին, Յիսուս Քրիստոս և սուրբ որդի։ Տէր Աստուած, Գառն Աստուծոյ և որդի հօր, որ առեր զմեղս աշխարհի, և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ հօր. Ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր, և գովեմք զանուն սուրբդ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբդ քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երիցս կրկնեա)։ Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ասացեմ, Տէր, ողորմեա ինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս

քո, զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է Տէր, աղբիւր կենդանութեան և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր։

Մաղթ. Փառք, պատիւ և երկրպագութիւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ։

Ա՛ն. ակ. Զյարութիւն զ Փրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։ Փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Բ՛ն. բկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք։

Զյարուցեալն զՔրիստոս օրհնեսցուք, և զյարութիւն նորա փառաւորեսցուք։

Գ՛ն. գկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք։

Որ ելն ի բարձունս և գերեաց զգերութիւն. էառ աւար, բաշխեաց պարգևս և եառ որդւոց մարդկան։

Դ՛ն. դկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք։

Որ համբերեաց խաչի և եղաւ ի նորափոր վիմի, և Աստուածային յարութեամբն զմահացեալսն վերաբերեաց ի կեանս։

—·—

ԵՐԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Հոգեգալստեան. Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք. զՀոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգալուստ։ Յեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած և զՏէր յաղբերացն Իսրայելի։

Ծաղկազարդի. Այսօր մատնէ Թագաւորն մեր Քրիստոս ի յերուսաղէմ նոր քաղաք Դաւթի։

Ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք, և զԱստուածորդին փառաւորէին։

Վաղդավառի. Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր։

Զհիւսիս և զհարաւ դու արարեր, Թափոր և Հերմոն յանուն քո ցնծացեն։

Ծննդեան և Աւետման. Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Աստուած զիրաւունս քո արքայի տուր, և զարդարութիւն քո որդւոյ Թագաւորի։

Խաչի. Եառուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեցին սիրելի քո, կեցո աչով քով և լուր մեզ։

Յայտնութեան և Տեառնընդառաջի. Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան, մարդ եղեալ սրբեցեր զչուրս վերածեալ զմեզ մկրտութեամբ սրբոյ Հոգւոյն։

Ի վայելչութիւն փառաց սրբութեան քո, ի յարգանդէ յառաջ քան զարուսեալ ծնայ զքեզ, մարդ եղեալ։

—·—

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ... վասն մեր, ողորմեա՛ մեզ։ (Երիցս կրկնեա)։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս տո զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ:

ՄԱՂԹ. Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ԲԱՐՈՁ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա.:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին: Եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

— · —

ՍԱՂՄՈՍ ՃԺԲ.

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանունն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն:

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա:

Ով է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ և բարձր առնէ զտառապեալս յաղբերաց:

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ: Օրթի, Հայլն.:

— · —

ԵՐԳ ՄԻԱՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐ

Դպ. Նորաստեղծեալ բանն յանէից ի սկզբանէ զերկինս երկնից, և զերկնային զօրս անմարմնոյ իմանալեացն զուարթնոց և զգալի տարերց քառից հակառակաց միաբանից, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անճառելի:

Երեքնրբեան մի տէրութիւն, միով բնութեամբ աստուածութիւն, լոյս որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական, զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւն անճառելի:

Բաբունօրէն բացատրեսցուք, զծածկեալ խորհուրդն ծանիցուք, զի լոյս անտես իմանալի, մաքուր հոգւոց տեսանելի, ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ, եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սէրդ սիրով խոնարհեցար, ի փրկութիւն մեր մարմնացար, նովին մարմնովն խաչեցար, ի գերեզման մահու եղար, այսօր յարեար աստուածաբար, ի հրեշտակաց քարոզեցար, եկայք փրկ.:

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն կենաց ուրախալից, և ի լերինն Գալիլիա առաքելոց մետասանից, արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին, եկայք փրկ.:

Սիօնի որդիք, զարթի՛ք, հարսին լուսոյ տուք աւետիք եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պսակէ զքեզ փառօք, եկ ընդ առաջ պճնեալ զարդուք, երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն:

— · —

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Դպ. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառաջաստ անմատոյց լուսոյն. զերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զդեսաւորեցեր ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Զարչարանօք քո սուրբ միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղաւ յառաքեալսն ի սուրբ վերնատան, հեղ և ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն:

Տան քում վայելչ սրբութիւն որ զգեցար զվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ. համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ:

Իւմամբ թաղ ի գլուխ պատեսցես զմիտս և զդայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ ահարումնի ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանին:

Բամից բոլորից տիրապէս աստուածպետական, նոփորատապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ լինիլ սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Քհնյ. Եւ փառն սրբուհւոյ Աստուածածնին:

Սրկ. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս զի կամեցեալ ողորմեսցի և զթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Քհնյ. Ընկալ Տէր, զաղաչանս մեր բարեխօս:

Դպ. Յիշեցիր և զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Քհնյ. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

—— . ——

ՓՈԽ

Դպ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդ և խաչն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ և օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն և օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սրկ. Սուրբ եկեղեցեաս աղաչեսցուք զՏէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց և կեցուսցէ շընորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛:

Քհնյ. Ի մէջ տաճարիս և առաջի Հայրն։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Սրկ. Դատ արա ինձ, Աստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում։

Քհնյ. Ցաղգէ որ ոչ է սուրբ ի մարդոյ մեղա.։

Սրկ. Օրհնեցուք զամենակալն Աստուած, զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան Աստուածածին, Մարիամ մայր Քրիստոսի, մաթեան, և երգել զերգս հոգեւորս, ամե.։

Քհնյ. Ի յարկի սրբութեան և ի տեղւոջս փառաբանութեան։

— . —

Շարական խնկարկութեան

Դպ. Ցայս յարկ նուիրաց ուխտի Տեառն Տաճարիս. Ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտաման պաղատանաց յառաջիկայ Սուրբ Պատարագիս, խնկովք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս, ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկաց տաշխից և կինամոնաց. և զմատուցողս պահեա սրբութեամբ միշտ և հանապազ քեզ ըսպասաւորել։ Բարեխօսութեամբ մօր քո և կուսի ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս։ Որ զերազոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զգաստ առաքելոց և մարգանէից, սուրբ վարդապետաց, այսօր ժողովեալք դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ, ընկալ առ ի մէնջ ըստ խնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու։

Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայ։

— . —

ՇԱՐԱԿԱՆՔ ԹԱՓՈՐԻ

Ա.ձ. Կանանցն կանխելով ի թաղումն կենդանւոյն, տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ։ Թափուր ըզգերեզմանն և ունայն տեսանէին և տրտմութեամբ լային յուսահատեալք։ Մայր խաչեցելոյն զի՞ լաս յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ, յարեաւ։

Բ.ձ. Զայն աւետաւոր հրեշտակին զուարճացոյց զառաւօտեան կանայսն, զՔրիստոսի պատմելով զյարութիւն։ Մի յուսահատիք տրտմութեամբ այլ ցնծացէք բերկրելով. խնկազգեացք աստուածայնոյն և փափաքողք յարութեան։

Գկ. Տեսիլ փայլակնաձեւ զուարթնոյն ի վիմին հնչեցեալ առ խնկազգեաց կանայսն, փարատեցոյց զերկիւղալից տրտմութիւնն։ Պահապանքն պակուցեալ ահաբեկ լինէին և կանանցն աւետաբանեալ մահ մահու յաղթեաց և ծանուցաւ մահ։ Քարոզս առաքելով առ երկանիկ առաքեալսն, փութացարուք ի Գալիլիա և տեսանիցէք զկենդանարարն զՔրիստոս։

Դ.ձ. Փառաբանակից Հօր Որդի, որ վասն մեր խաչեցար, զդժոխս աւերեալ յարմար մաւուր

երրորդի, փառք յարութեան քո Տէ՛ր։ Հրեշտակապետին իջումն որ զպահապանսն երկիւղիւ զարհուրեցոյց առ դրանքն գերեզմանին, փառք յարութեան։ Եւ ըսքանչելի սուրբ կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարուցիչն մեռելոց. փառք յարութեան։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնեալ թագաւորութիւն Հօր և։

Եւ ասի ժամամուտ ըստ պատշաճի աւուրն

Սրկ. Եւ եւս խաղաղութ.։ Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնութիւն և։ Խաղաղութիւն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպ. Առաջի քո, Տէր։

Քհնյ. Տէր Աստուած մեր, որոյ կարողութ.։

— · —

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Տեր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ

Ա՛ն. Զթագաւորն փառաց Քրիստոս որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ կուսէն և խաչի համբերելով, միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։ Որ զթագումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանութեամբ։ Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց, եկեղեցւոյ իւրում զգեցոյց մեծվայելչութիւն, միաբանութեամբ։

Ակ. Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի, Ժողովուրդք զՔրիստոսի բարեբանե-

ցէք։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած, քանզի չիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբով, Ժողովուրդք։ Յարեաւ Աստուած և տիեզերք ամենայն նորափեսուր զարդարեցան և մանկունքք հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին, Ժողովուրդք։

Բն. Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն որ ի կուսէն մարմնացաւ, հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի, փառքք նմա այժմ և յաւիտեան։ Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բանն և եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց, փառքք նմա։ Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ ի փառս և ի գովեստս անուան իւրոյ, փառքք նմա։

Բկ. Օրհնութիւն ի բարձունս անօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ Ալէլուիա, ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ Ալէ.։ Օրհնութիւն ի բարձունս անբաժանելի և միանական սուրբ Երրորդութեանն Ալէ.։

Գն. Զթագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք, ամենայն երկիր։ Արարողին երկնի և երկրի մատուցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր։ Երրորդութեանն և մի Աստուածութեանն մատուցուք պատիւ, երկրպագութիւն յաւիտեանս ամէն։

Գկ. Լուսով աստուածութեան քո Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա զսա անշարժ յաւիտեան։ Տօն է այսօր յԵրուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ, պահեա զսա։ Բացան դրունքք հա-

ւատոյ նոր Սիովնի ընդունիլ զանմահ փեսայն յառաջաստ, բաշխէ զմարմին քո և զարիւն, պահեա զսա։

Դն. Թագաւոր Քրիստոս էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ Կուսէն, Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ զմահ մեռուցեր, և անապական յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհ, Թագաւոր փա.։ Որ կենդանարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով, Թագաւոր փա.։

Դկ. Որ անբաւելի յաղթող զօրութեամբ Թագաւոր ես երկնի և երկրի Քրիստոս Աստուած, օրհնարանեմք զքեզ։ Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից և խոնարհեալ մարմին զգեցար փառաց Թագաւոր, օրհնարա.։ Որ կարողապէս զմահ կոխեցեր և յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութիւն, օրհնարա.։

Սրկ. Օրհնե աՏէր։

Քհնյ. Զի քո է կարողութիւն և զօրութիւն։

Սրկ. Պռոսխումէ։

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ։ (Երիցս կրկնեա)։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ.։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Վասն հայրապետին մերոյ տեառն (այս

անուն) կենաց և փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչ.։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Վասն բարեպաշտ Թագաւորաց և աստուածասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Վասն հանգուցելոց որք։

Դպ. Ցիչեա՛ Տէր և ողորմեա՛։

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ։

Դպ. Տէր ողորմեա՛։

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս։

Դպ. Քեզ Տեառնդ, յանձն եղիցուք։

Սրկ. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր։

Դպ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ող.։

Սրկ. Օրհնե աՏէր։

Քհնյ. Զի ողորմած և մարդասէր ես։

Գիրքն և Աւետարանն կը կարդացուի

— . —

ԱԼԷԼՈՒԻԱՅՔ ՃԱՇՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ա.ն. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Ակ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Բն. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։

Բկ. Աբի, Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ:

Գծ. Ուրախ եղեր Իսրայէլ յարարիչ քոյ, որդիք Սիօնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

Գկ. Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդիս մարդկան:

Դծ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո և դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Դկ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Հաւատամքն...

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Իսկ մեք փառաւորեսցուք:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսո՛:

Դպ. Ամէն, Տէր ողորմեա:

Սրկ. Եւ եւս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից:

Դպ. Կեցո Տէր:

Սրկ. Զժամ սուրբ պատարագիս և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել:

Դպ. Շնորհեա՛ Տէր:

Սրկ. Զհրեշտակ խաղաղութեան պահ՝:

Դպ. Շնորհեա՛ Տէր:

Սրկ. Զքաւութիւն և զթողութիւն:

Դպ. Շնորհեա՛ Տէր:

Սրկ. Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութ՝:

Դպ. Շնորհեա՛ Տէր:

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ. Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր:

Դպ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ող՝:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Որպէս զի արժա՝: Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քհնյ. Խաղաղութեամբ քով Քրիստոս:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Տէր Աստուած օրհնեսցէ զամեն՝:

Դպ. Ամէն:

Սրկ. Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:

Դպ. Մարմին տէրունական և արիւն փրկչական կան առաջի երկնային զօրութիւնքն աներեւոյթք, երգեն և ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

— . —

(Եւ դպիրքն երգեն զարբասացութիւն ըստ պատշաճի աւուրն)

Ծնունդեան, Աւետեաց, Վարդավառի և Աստուածածնայ

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին Թագաւորին: Որք երգէին և ասէին, սա է Որդին Աստուծոյ, ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

Մեծի Հինգշաբթի

Զերդս հոգեւորս: Որ վերանստիս ի կառս հրանիւթս քառակերպեանս անճառելի բանդ Աստուած: Այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արարածոցս ,յանձն առեր բազմել ընդ աշակերտան: Եւ սերովբէքն և քերովբէքն վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով. սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

Ցինանց եւ Խաչի

Ո՞վ է, որպէս Տէր Աստուած մեր խաչեցաւ վասն մեր, Թաղեցաւ և յարեաւ, հաւատարիմ եղեւ յաշխարհի և համբարձաւ փառօք: Եկայք ժողովուրդք, զօրհնութիւնս ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով. սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր Աստուած մեր:

Կիւրակեի եկեղեցւոյ և Ծաղկազարդի

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց

հրեշտակապետք կան առաջի քո և բիւրք բիւրուց պաշտեն զքեզ Տէր, և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաց. սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

Պահոց և Նիջեցելոց

Վասն յիշատակի հանգուցելոցն, ընկալ հայր սուրբ մարդասէր զպատարագս: Եւ համարեա ըզհոգիս նոցա ի թիւ սրբոց քոց յարքայութեան երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուցցուք ըզպատարագս, հաշտեսցի Աստուածութիւնդ և հանգուսցէ զհոգիս նոցա:

Մարտիրոսաց

Սրբութիւն սրբոց, մեծ և ահաւոր և զինուորութիւնք հրեշտակացն օրհնեն զքեզ և ասեն. փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն:

Մարգարէից, Առաքելոց և Հայրապետաց

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից: Որ նստիս յերկնից ի յերկինս և լոյս ծագես յարարածս քո: Որ խոնարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք և սուրբ զանունդ քո փառաւորեմք Տէր, որ պսակիչդ ես քոց սրբոց (այս անուն), վասն զի սոքա են մեզ բարեխօս, Տէր ամենակալ, ի քում յարքայութեանդ:

Սրկ. Համբարձէք իշխանք զդրուս ձեր իվեր, համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց:

Քհնյ. Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր հզօր

զօրութեամբ իւրով, տէր կարող ի պատերազմի:

Սրկ. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց:

Քհնյ. Ո՞վ է սա թագաւոր փառաց տէր զօրութեանց:

Սրկ. Սա ինքն է թագաւոր փառաց:

Քհնյ. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ.:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սրկ. Եւ եւս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ և գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք և խաբէութեամբ: Մի՛ երկմտութեամբ և թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով: լցեալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան: Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. և գացուք զողորմութեան զշնորհս: Յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան՝ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուսցէ և ողորմեսցի:

Դպ. Կեցո՛ Տէր, և ողորմեա:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Շնորհօք և մարդ.: Խաղաղութիւն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո տէր:

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և աղօթեցէք:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած ասա բաղմեցաւ:

Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ:

Եկեղեցիս մի անձ եղեւ համբոյրս քո լրման տուաւ:

Թշնամութիւնն հեռացաւ, սէրն յընդհանուրս սփռեցաւ:

Արդ՝ պաշտօնեայք, բարձրեալ զձայն տուք օրհնութիւն ի մի բերան, միաձայնական Աստուածութեանն, որում Սրովբէքն են սրբաբան:

Ոմանք և զայս ասեն ի հանդիսի տօնի

Սրկ. Որք հաւատով կայք յանդիման, սուրբ Սեղանոյս արքայական, տեսէք բաղմեալ զՔրիստոս արքայն և չուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վեր համբառնամք գաչս ունելով, և պատրաստիմք զայս ասելով, զմեղս մեր մի՛ յիշեսցես, այլ զթութեամբ քո քաւեսցես, ընդ հրեշտակաց օրհնեն զքեզ և ընդ սրբոց քոց լեր փառք քեզ:

Սրկ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, և նայեցարուք զգուշութեամբ:

Դպ. Առ քեզ, Աստուած:

Սրկ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն Աստուծոյ:

Դպ. Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Շնորհք, սէր և աստուածային սէր:

Դպ. Ամէն, և ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ: Ի վեր ընծայեսցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:
Սրկ. Եւ զոհացարուք զՏեառնէ բոլորով սրբութիւն:
Դպ. Արժան և իրաւ:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Եւ ընդ Սերովբէսն և ընդ Քերովբ:
(Իսկ ի հանդիսի աւուրս, զկնի Արժան
եւ Իրաւին զայս ասեն:)
Սրկ. Եւ զստոյգ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն տեղիս, զոհութիւն մատուցանեմք քեզ, Քրիստոս:
Դպ. Որով և զհրաշալի յարութիւնդ քո գովեն զօրութիւնք:
Սրկ. Սարսին սերովբէքն:
Դպ. Դողան քերովբէքն:
Սրկ. Եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ քաղցր ձայնիւ եղանակեն և ասեն.
Դպ. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց: Լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ, որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն, ովսաննա ի բարձունս:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ:
Դպ. Ամէն:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան:
Դպ. Ամէն: Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո եառուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց, հեղմամբ արեան Նորա աղաչեմք զքեզ, ողորմեա՛ քո բանաւոր հօտի:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ:

Դպ. Ցամենայնի օրհնեալ ես, Տէր: Օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր:
Սրկ. Օրհնեա՛, Տէր:
Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպ. Առաջի քո, Տէր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց, բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ աղաչեմք զքեզ, ողորմեա՛ աղեամբ քով փրկեալ հօտի:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Որպէս զի եղիցի սա ամենեցուն:
Դպ. Հոգի Աստուծոյ, որ զփառակցի Քո զխորհուրդ, իջեալ ի յերկնից, կատարես ի ձեռս մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ, հանդո զհոգիս մեր ննջեցելոցն:
Սրկ. Օրհնեա՛ Տէր:
Քհնյ. Ընդ որս և մեզ այց արասցես:
Դպ. Ցիշեա, տէր և ողորմեա:
Քհնյ. Աստուածածնին սրբոյ կուսին:
Դպ. Ցիշեա, տէր և ողորմեա:
Սրկ. Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց և ամենայն հայրապետաց սրբոց: Առաքելազործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, և ամենայն սրբոց: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:
Դպ. Ցիշեա, տէր և ողորմեա:
Սրկ. Օրհնեալ, գովեալ և փառաւորեալ հրաշալի և աստուածազարդ յարութեանն (կամ տէ-

բութեանն) Քրիստոսի երկիրպագանեմք:

Դպ. Փառք յարութեան (կամ տէրութեան) քո, Տէր:

Սրկ. Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝ սրբոյ Թադէոսի և Բարթուղիմէոսի առաքելոցն. և Գրիգորի Լուսաւորչին, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսեսի, Սահակայ, Դանիէլի և Խաղպ, Մեսրոպայ վարդապետին, և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսեսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, և Գրիգորի և Մովսէսի Տաթեւացեացն, և սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց, հովուաց և հովուապետացն եւայլն:

Դպ. Յիշեա, տէր և ողորմեա:

Սրկ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր և աստուածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնուփրիոսի, Աբրայ, Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց և Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց և ամենայն սրբոց հարց և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա, տէր, և ողորմեա:

Սրկ. Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա, տէր և ողորմեա:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Եւ եւս առաւել զեպիսկոպոս:

Սրկ. Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցէ: Սովաւ շնորհեա, զտէր զհաստատութիւն և զզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց և եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն հայոց տեառն (այս անուն), և սրբոյ Երուսաղիմայ պատրիարք տեառն (այս անուն), և Կոստանդնուպոլսոյ պատրիարք, տեառն (այս անուն), և քահանայիս որ զպատարագս մատուցանէ, և վասն զօրութեանց և յաղթութեանց թագաւորացն քրիստոնէից և իշխանացըն բարեպաշտից: Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց և չինողաց սուրբ եկեղեցւոյս, որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: ||Ազատութիւն եղբարց մերոց գերելոց և շնորհ յառաջիկայ ժողովրդեանս, հանգիստ հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս կատարելոց, եղեցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ և փրկչին:

Դպ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Ամէն, և եւս խաղաղութեան զՏէր աղաչ:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սրկ. Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւս առաւելապէս զտէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա՛:

Սրկ. Վասն մատուցեալ սուրբ և աստուածային անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զտէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Որպէս զի տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ երկնային և յիմանալի իւր մատուցարան, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգեւս Հոգւոյն սրբոյ զտէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Ընկալ, կեցո՛. ողորմեա. և պահեա զմեզ տէր քոյին շնորհիւ:

Դպ. Կեցո՛ տէր և ողորմեա:

Սրկ. Զամենասրբուհի զԱստուածածինն ըզմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով զտէր աղաչեսցուք:

Դպ. Ցիշեա՛, Տէր և ողորմեա:

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս:

Դպ. Քեզ, Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ. Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր:

Դպ. Տէր, ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո.:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Եւ տուր մեզ, Հայլն:

Դպ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Զի քո է արքայութիւն: Խաղաղութ.:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո տէր:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ:

Սրկ. Պռոսխումէ:

Քհնյ. Ի Սրբութիւն սրբոց:

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Օրհնեալ, Հայր սուրբ Աստուած ճըշմարիտ:

Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Օրհնեալ, Որդիդ սուրբ Աստուած ճըշմարիտ:

Դպ. Ամէն:

Քհնյ. Օրհնեալ հոգիդ սուրբ Աստուած ճըշմարիտ:

Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ:

Դպ. Ամէն: Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ: Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Ի սուրբ, ի սուրբ պատուական մար.:

Դպ. Տէր ողորմեա: (Զորիցս կրկնեա):

Սրկ. Տէր ողորմեա: (Զորիցս կրկնեա):

Դպ. Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Սրկ. Եւ հիւանդաց բժշկութիւն, ազգիս Հայոց ազատութիւն:

Դպ. Տէր ողորմեա, Տէր, ողորմեա, Յիսուս փրկիչ մեզ ողորմեա:

Սրկ. Սուրբ, և անմահ Պատարագիս Միջնորդութեամբ:

Դպ. Ընկալ, Տէր, և ողորմեա:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք, ալէլուք և երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք և զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ, Ալէլուիա:

Մատիք առ Տէր և առէք զլոյս, ալէլուիա:

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր, ալէլու:

Օրհնեցէք զտէր ի յերկինս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, ալէլուիա:

Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա, ալէլուիա:

Սրկ. Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք:

Դպ. Աստուած մեր և տէր մեր, երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քհնյ. Կեցո, Տէր, զժողովուրդս քո, և օրհնեա

զժառանգութիւնս:

Դպ. Լցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով զմարմին քո և զարիւն, փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ և հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն, փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սրկ. Ամէն, և եւս խաղաղութեան զՏէր աղա.:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ երկնային անմահ անարատ և անապական խորհրդոյս զՏեառնէ զոհացարուք:

Դպ. Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ. բաշխելով զմարմինդ և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Որ օրհնես զայնոսիկ, այք օրհնեն զքեզ, Տէր, և սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Քհնյ. Կեցո, զժողովուրդս քո:

Դպ. Ամէն:

Քհնյ. Սրբեա զնոսա այք ողջունեցին:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զխաղաղութիւն պարգեւեա:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զի ամենայն տուրք բարիք և:

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան: (Երիցս կրկնեա):

Քհնյ. Կատարումն օրինաց և մարգարէից:

Սրկ. Օրթի:

(Աւետարան՝ ի սկզբանէ Եր Բանն)

Սրկ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր. Սուրբ խաչիս աղաչես:

Քհնյ. Պահպանիչ և յոյս հաւատացելոց:

Սրկ. Օրհնեցիր զՏէր յամենայն ժամ:

Քհնյ. Օրհնեալք եղերուք ի չնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ. և Տէր եղիցի

— . —

ԿԱՆՈՆ ԽԱՉԱՀԱՆԳՍՏԻ

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած, և ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ, սա պահեսցէ զմեզ.

Եւ զքո միւսանգամ զգալուստդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի, սա պահեսցէ:

Աստուած մարդասէր, որ զմաքսաւորն արդարացուցեր. քաւեա զիս զմեղաւորս:

Որ քղանցիւ հանդերձի քո զմերձեցեալն ի քեզ բժշկեցեր. քաւեա:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք հոգիս ի թշնամւոյն. և ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր. վասն որոյ բժշկեա զմեզ Քրիստոս, որպէս մարդասէր:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու. և կենդանարար քո յարութեամբդ. հրաւիրեցեր զմահացեալքս ի յարութիւն անմահութեան, վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ:

Փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Առ քեզ ապաւինիմք, Ամենասրբուհի. գերագոյն և հրաչալի և բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց. և եղեր վերընկալ աստուածային բանին:

Այժմ և միշտ և յաւիտեանս:

Քհնյ. Սրբեա՛, տէր, զմեղուցեալ քոց ծառա-

յից զգայարանս, և չնորհեա՛ տեսանել զքեզ, և լսել զայրական զձայն, եթէ դա է որդի իմ սիրելի:

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Քհնյ. Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նշանաւ: (Երիցս կրկնեա):

Դպ. Ամէն:

Քհնյ. Օրհնութիւն և փառք:

Դպ. Տաճար են սուրբ հոգւոյն, կենդանի ոսկերք սոցա հիւանդաց բժիշկ, ապաշխեցուք զանձրս սոքօք խնայեա ի մեզ:

Սոքա են դեղ կենաց, պարգևեաց մեզ ի Քրիստոսէ ի բժշկութիւն, պատուական սուրբ արեամբն իւրեանց:

Սա է կարապետ յաւուր գալստեան փրկչին, և պսակ պարծանաց հաւատացելոց և սովաւ յաղթեսցուք յանօրէն թշնամւոյն:

Սրկ. Վասն հիւանդաց:

Քհնյ. Փարատեա:

Սրկ. Սուրբ խաչիւս ապա.:

Քհնյ. Պահպանիչ:

Սրկ. Օրհնեցից:

— . —

ԵՐԳ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ

Ալէլուիա, ալէլուիա: Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօրն երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս: Եկեալքս ի մտանել արեգականն. տեսաք զլոյս երեկոյիս: Օրհնեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ Աստուծոյ: Եւ ամենեքեան ասեմք. ամէն:

Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանն: Որ տայ զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ:

— . —

ՇԱՐԱԿԱՆ ԿԻՐԱԿԱՄՏԻ

Ա.Ա. Սուրբ ես Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս, և բարեբանիս ի սրբոց քոց: Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք, անդադար օրհնեն սուրբ զանունդ քո: Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք երկրպագեսցուք ակրութեանդ քո: Լոյսդ որ յառաջ քան յաւիտեանս ի Հօրէ առաքեցար, և լուսով խմնալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես, թագաւոր յաւիտենից: Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերստին և զխաւարն անգիտութեան յարութեամբդ քո հալածեցեր, Օրհնեալ: Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս, օրհնեալ ես թագաւոր յաւիտենից: Երկնաքաղաքացին Յովհանէս մեծ ի ծնունդս կանանց, քարոզէր յանապատի ապրարարող բարբառովն գծագումն լուսոյ արեգականն արդարութեանն: Ճըշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ, յառաջնթաց Կարապետ և պատմող աստուածային օրինացն, հարթէր ճանապարհս թագաւորին յաւիտենից: Յանօրէն զինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ, ի պարզեւի մասին խնդրէր զգլուխ մարգարէին. չիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն:

Փառք Հօր և Որդւոյ և:

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ, զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից:

Այժմ և միշտ և յաւիտեանս:

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ Երրորդութեանդ, և զապաւինեալս ի խորան փառաց քոց, պահեա անխռով ի խաղաղութեան:

—— . ——

ՊԱՇՏՕՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ ՇԱՐԱԿԱՆ

Դկ. Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր բանդ Աստուած, թողութիւն շնորհեա նընջեցելոց քոց ծառայից, յորժամ դաս դատել զոր անրատ ձեռօք ստեղծեր: Որ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն. թողութիւն շընոր: Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն. թողու: Որ պսակիչդ ես քոց սրբոց, և անվախճան բարեաց բաշխող. թողութիւն շնորհ.:

Դձ. Անըսկիզբն Աստուած, սկիզբն արարչութեան, ի հողոյ ստեղծեր ըզմարդն առաջին, գործել և պահել յամպատում ի կեանս. իսկ ի ստնդանել հրամանի քո, Տէր, զվճիռ մահու ի վերայ եղեալ, հող էիր անդրէն և ի հող դարձցիս, և այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից, ընկալ և հանդո զհրաժարեալ հոգիս յեօթնաստեղեան լուսեղէն խորանս, ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեամբ յերկնից բարութիւնսըն: Ոսկի եղեալսն անպիտանացայ, գեղեցկայարմար չինուածոյս քակտումն, իմաստունս յիմարեցայ, ի յալեաց մեղաց յոր ընկղմեցայ. և այժմ: Կոչողն եհաս, վերին կոչողին, կոչնատէրն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաչառ, դատաստանն արդար, հրեշտակք անողորմք դատեն զմեղաւորս. և այժմ աղաչեմ:

—— . ——

ԵՐԳ

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան, յորժամ լըսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լսեցո զԱստուածային բառբառըդ քո, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ գուարթնոցն:

Քահանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ զմեզ նովին յուսով: Յերուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին, ի փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր ողորմեա, հոգւոցն մեր ննջեցելոց:

Ահեղ խորհուրդ քահանային, բազկատարած կայ ի բեմին, առաջի սուրբ սեղանոյն, հուր չիջանի, խաւար մերժի, տրամեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի, ողորմած Տէր:

—— . ——

ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԵԱՆ

Դկ. Խորհուրդ մեծ և սքանչելի՛ որ յա՛յսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրե՛շտակս, ասեն ա՞ւետիս աշխարհի՛:
Ծնաւ նոր արքա՛յ ի Բե՛թլեհեմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնե՛ցէ՞ք, զի վա՞սն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի և երկրի՛ ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ, ի սա՞ւրբ այրին բազմեցաւ:
Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծա՛պայծառ աւետեաց.
Եւ արարածք ամենայն զգեցան Հանդերձ փրկութեան:
Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ.
Եւ հրեշտակին բազմութիւնքն, յերկնից յերկիր վայր իջեալ:
Այսօր հովուացն ասեալ զարդարութեան արեգական.
Եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:
Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս.
Արդարութեան արեգական ակր փառքք քեզ:
Ծընաբ ի յայրին ընծայեցար Բեթլեհեմ.
Արդարութեան արեգակն՛՛:
Հովուաց յայտնեցար երկրդագելոյ ի մոգուցն:
Արդարութեան արեգակն՛՛:

Եւ մեք երգեսցուք ի կուսէն մարմնացար.
Արդարութեան արեգակն՛՛:

— . —

ՀԱՐՑ ԾՆՆԴԵԱՆ

Գձ. Անբսկիզբն էակից բանըդ Հօր. որ էիր յառաջ քան զյաւիտեանս, և եկիր ի փրկութիւն ստեղծուածոց քոց, ըզքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց:

Ծընար ի կուսէ անճառ միութիւն. անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ. ըզքեզ օրհն.

Ցնծութեամբ տօնեսցուք ըզծնունդ քո սուրբ, որ յառնեցար մեզ լոյս ի լուսոյ, և լուսով քո լցեր զտիեզերս. ըզքեզ օրհն.

Օրհնեցէք, ամենայն գործք տեառն, զտէր օրհնեցէք, և բարձր արարէք ընդ յաւիտեան:

Ըզծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Զանճառելի ըզծնունդ Փրկչին գովեցէք և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

Ի ԹԱՓՈՐԻՆ

Այսօր տօն է սուրբ ծննդեան. աւետիս:
Տեառն մերոյ և յայտնութեան. աւետիս:
Ծնաւ, երեր զանմահ արքայն. աւետիս:
Այսօր արեւն արդարութեան. աւետիս:
Երեւեցաւ ի մէջ մարդկան. աւետիս:
Այսօր սուրբ կոյսն անապական. աւետիս:
Այսօր հրեշտակք յերկնից. աւետիս:
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Մեծացուցեալ. ԳՁ.

Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծուցուցանմք:

Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ:

—— . ——

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ

Մեծացուցեալ ԳՁ

Զանճառելի լուսոյ մայր, և զբնակարան անսկզբնակից որդւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր, և զանձնաւոր տաճար Աստուծոյ բանին, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին յէից ի յարգանդի ի բարձ, զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

—— . ——

ԵՐԳ

Ո՛վ զարմանալի, խորհուրդ այս մեծ յայտնեալ: Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:

Կամէր մկրտիլ ի ծառայէ իւրմէ, Զառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն:

Յորդանան լըւեալ փախստական դառնայր. Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր:

Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես, Եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեղս:

Յիսուս առաջեաց աստուածութեամբն ի Ջուրն Հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ:

Երկինք պատառեալ ձայն ի յերկնից իջեալ, Սուրբ Հօր ի բարձանց որդւոյն իւր վկայեալ:

Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ, Յայտնեալ ցուցանէր Հօր փառակից զՈրդին:

—— . ——

ՁՐՕՐՀՆԵԱՑ

Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ որդւոյ վկայն, այլ յորդորէ, գետ յորդորէ գետ Յորդանան աւետաւոր ձայնիւ երգէ. մեծ Կարապետն Յովհաննէս: Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշինեաց անկիզելի զաչակերտացն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Աննիւթական աղաւնի անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստդ, զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

—— . ——

ՍԵՓ ՊԱՀՈՑ ԵՒ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԿԱՐԳ

Նախ՝ Եղիցի անուն տեառն օրհնեալ

ԵՐԳ

Յարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, ամենայն ազգ և ազինք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց ըզլոյս արեգականն այսօր յաչխարհս:

Եկեղեցիք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ երրորդութեանն, յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս գովեցէք ընդ հօր և հոգւոյն, որ ծագեաց ըզլոյս դիտութեան իւրոյ ի մեզ:

—— . ——

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարեւելից յարեւմուտս մանկունք Սիօնի, օրհնեցէք միշտ անդադար զծագողն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստն լուսոյ:

Քարոզ, Աղօթք եւ փոխ՝

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէք տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ ևն.:

—— . ——

ԵՐԳ

Ճրագնաւորք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փախանակեալքք զանցաւորս առիք զանանցն բարութիւնն. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք և սիրելիք ի յերկնաւոր հօրէն, որք մրկրբեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարե.:

Մարտիրոսք ցանկալիք, և օթեվանք հոգւոյն ճշմարտութեան, որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեան. բարե.:

Գովելիք աչխարհի, և բաղձալիք վերնոցն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարե.:

Կամաւոր պատարագք. մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարե.:

—— . ——

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճրագնաւորքք ճշմարիտք վրկայք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակքք կենդանիք սիրողք Քրիստոսի, որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն:

Մարտիրոսքք ցանկալիք մարդկան ըղձալիք, հայցեցէք ի սուրբ հոգւոյն տալ մեզ ըզբարիս:

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աչխարհի. խընդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբք պատարագք հասակաւ մանկունք. հայցեցէք լինիլ և մեզ՝ ձեզ պըսակակից:

Մաղթանք, Քարոզ, Աղօթք եւ Փոխ՝

Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ, ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ ետս և մարմինն իմ. ելն.:

—.—

ԵՐԳ

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր Երկնաւոր ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:

Լոյս, ի լուսոյ ծագումն արեգակն արդար, անճառ ծընունդ հօր որդի. յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ հօր. ի ծա.:

Լոյս, ի հօրէ բղխումն աղբիւր բարութեան, հոգիդ սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն. ի ծա.:

Լոյս, երրեակ և մի անբաժանելի սուրբ երրորդութեան, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք, ի ծա.:

—.—

ՑՈՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած հայր ամենակալ. ընկալ զաղաչանքս մեր քոց պաշտօնէից:

Ի հօրէ ծագումն անճառ, արեգակն արդար, ծագեա ի յանձինքս մեր զլոյսդ ողորմութեան:

Ի հօրէ բըղխեալ հոգի, աղբիւր բարութեան. լուսով քով լըցո ըզմեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք և մի բնութիւն, մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւն:

Մաղթանք, քարոզ, աղօթք եւ փոխ՝
Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի:
Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց զիս, ևն.:

—.—

ԵՐԳ

Ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք Քրիստոս. առաջնորդեա հոգւոց մերոց, յերկրէ ելանել յերկինս:

Դուռըն կենաց մըտից Յիսուս, մոյծ և ըզմեզ առ հայր քո և հոգի, երգել միշտ ըզփառս:

—.—

ՑՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Քրիստոս և ճըշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յերկինս:

Դուռըն կենաց մըտից Յիսուս, Աստուած ճըշմարիտ, մոյծ և զմեզ առ հայրըդ քո, հոգւովըդ Սրբով:

Մաղթանք, քարոզ, աղօթք և ապա՝
Տէր Ամենակալ, քարոզ և աղօթք
Շարական, և յետոյ՝ Տէր ողորմեա ողբաձայն
Մաղթանք, քարոզ, աղօթք:

—.—

ՇԱՐԱԿԱՆ ԾԱՂԿԱՁԱՐԴԻ

Ա՛ծ. Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար, բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ուստի և մեք զյաղթական օրհնութեանցն ըզձայն մատուցանեմք քեզ Թագաւոր փառաց՝ ընդ աղայսն օրհնաբանելով, բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ովսաննա ի բարձունս՝ ալէլուիա, բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն՝ ալէլուիա, և օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն, ալէլուիա:

Այսօր զԱնակիզքն Բանն՝ որ յաթոռ փառաց ընդ Հօր՝ յերկրի երեւեալ տեսաք, քրօբէական ձայնիւ օրհնեսցուք, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Այսօր գոլով ի Բեթանիա, քո ամենազօր հրամանաւդ, ճայնեցեր Ղազարու և դողացաւ մահ, դժոխք պարտեցաւ ապականութիւն լուծաւ, կենդանարար Քրիստոս կեցո զմեզ: Այսօր գոլով ի Բեթանիա, զքո զաշխարհակեցոյց սուրբ զյարութիւնդ, յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի Թաղմանէ, կենդանարար՛՛: Այսօր գոլով ի Բեթանիա Եբրայեցւոց մանկունքն սքանչացեալ ասէին, զՄարիամու զեղբայրն ի Թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու, կենդանարար՛՛:

Կենդանութեանց բաշխող Քրիստոս, ի Բեթանիա եկաւորեալ այսօր, բարեկամին Ղազարու պարգեւէ զկենդանութիւն: Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի և ընդ Մարիամու,

ողբակցէր և որպէս մարդ հարցանէր ուր եդիք զՂազարոս: Եւ որպէս զԱստուած բարբառով յարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն, և զուգընթաց ձայնիւ մեռեալն եկն արտաքս անապական:

—·—

ԳԱՆՁ

Այս խորհուրդ լցաւ, անդ գուշակեցաւ, աստ կատարեցաւ:

Աստուած մարդացաւ, ընդ օրինօք մտաւ, քահանայացաւ:

Այսօր վերացաւ, վերնատունն նստաւ, և դառն կերաւ:

Հին օրէնքն անցաւ, զի գիրն լցաւ, և նորս սկսաւ:

Տէր քոյին չնորհաւ, լուա զմեզ բազկաւ, արբո բաժակաւ:

Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց, ազաչեմք:

Լուր Տէր եւ ողորմեա:

Սիրա իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի:

Որ Տէրն ամենի, նմա առաջի, ի ծունկս անկանի:

Նա ոչ ամաչէ, և ոչ զարհուրի, սիրողն արծաթի:

Նոր սեղան դնի, և հաց բաղարջի, ւ՚անապակ գինի:

Տէր իմ արժանի, արա զմեզ հացի, քո սուրբ սեղանի:

Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց, աղաչեմք:

Լուր Տէր և ողորմեա:

Խոնարհիլ պարտին, իւր յանցաւորին, ըստ օսրբեսցին:

Որք որ փափաքին, ուտել զայն մարմին, որով բինաց Փրկչին:

Թողուլ կամովին, զյանցանս ի սրտին, զեօթանասնեկին:

Իսկ որ ստամբակին, եղեալ օրինին, որ Աստուածային:

Իսկ Աստուածային. բնաւ ոչ սահմանին, մեր բազմողորմին:

Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց, աղաչեմք:

Լուր Տէր և ողորմեա:

Աստուած ամենի, Միածին Որդի, կամաւ Հօր հոգւոյն ճշմարտի, յերկիր խոնարհի:

Սիրով անքննին, լոյս անմատչելին, ղենջակ սփածեալ զի ծածկեր զմերկութիւն նախկին:

Տէրն հրեղինաց, հրանիւթից զօրաց, խոնարհեալ ի ծունկս լուանայ զոտս հողեղինաց:

Նիւթական ջրով, տարբական նիւթով մեզ նոր պատուիրան աւանդեալ զմեզս մաքրելով:

Ասաց Պետրոսին, հաւատայ վիմին, Ե՛կ զի լուացից զոտս քո յընթացից չարին:

Ցնծասցուք հոգւով, զնոյն ճաշակելով, փառք Հօրն տացուք և հոգւոյն Միածնի մարմնով:

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք, և ըզսուրբ մատնութիւնդ քո մեծացուցանեմք, և ըզսուրբ չարչարանդ քո փառաւորեմք, եկայք հա-

ւատացեալք երկիրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն Խաչին իւրոյ չնորհեաց պարգեւս աշխարհի, Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ մատնեցար վասն մեր ողորմեա մեզ: (Երիցս կրկնեա):

Փառք սուրբ խաչիդ Ալէլուիա, Սուրբ մատնութեանդ, Ալէլուիա, Չարչարանացդ Ալէլուիա: Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց: Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Փառք Սուրբ խաչիդ, ալէլուիա են. փառք և երկրպագութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Փառք Սուրբ խաչիդ Ալէլուիա, են. Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան ըզմեզ բարեբանեմք:

— · —

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅ

ՀԱՆԴԷՍ ԹԱՂՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ՀԱՄԲԱՐՁԻ ԴՁ. ՍՏ.

Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք սուրբ Երրորդութեանն, լոյսն որ ընդ հօր էութեան, ի քահանայից դատապարտեալ եկեալ ի խաչ ելանել, անմահ Թագաւորն:

Զոր երկինք ոչ բաւէին տանել, զփայտ պատուհասի ուսով բարձեալ, եւ եկեայ ի տեղի կառափման, ի խաչ ելանել, անմահ:

Հիացեալ պետութեանց երկնից, ընդ Թաղումն Տեառն ի նոր գերեզմանի, քանզի որ անմահն է յէութեան, վասն արարածոց փրկութեան ըզմահ ճաշակեաց, անմահ:

—— · ——

ՇԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԹԱՓՈՐԻՆ

ԲԺ. Պարգեւատուն ամենեցուն, այսօր խնդրի պարգեւ ի Պիղատոսէ, եւ արիւղն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսեփայ:

Կենդանատուն ամենեցուն այսօր, դընի ի նոր գերեզմանի, և զանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր, եղաւ ի նորափոր վիմի, զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի զինուորացն:

—— · ——

ՇԱՐԱԿԱՆ ԽԹՄԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԳԺ. Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալէ լոյս քո, զարդարեա զամուրս քո, եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի:

Օրհնեարգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիովնէ, և քեզ մատուցին աղօթքք յԵրուսաղէմ:

Գովեա Երուսաղէմ ըզտէր, և օրհնեա զԱստուած քո ը նոր ժողովուրդ դշխոյ դուստրը Սիովնի:

—— · ——

ՁԱՏԿԻ ԱՌԱՒՕՏ

ԱՒԱԳ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ա. Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր, քեզ աւետիս խնդութեան, հարսն ի յերկրէ եկեղեցի, օրհնեա ի ձայն ցնծութեան, զԱստուած քո Սիովն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց ըզմանկունսն քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս, օրհնեա՛՛:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեակ լուսովն, և քեզ ծագեաց լոյս գիտութեան, յարուցեալն ի մեռելոց Քրիստոս, օրհնեա՛՛:

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի, արասցուք տօն ցնծութեամբ, նորոգեալս ի հնութենէ մեղաց ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն, ի խնկել զանապական մարմինն: Եւ գտին ըզվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին և լուեալ բարբառ ի հրեշտակէն, եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց ըզմահ: Եւ հանդիպեալ քո Տէր, առաքելոցն և տուեալ ողջոյն կենդանարար, առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց:

Փառք յարութեան քո տէր: Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն, իսկ յարութեամբ միածնիդ ըզդեցաք զանմահութիւն, փառք'': Խաբանօք փայտին ճաշակեցաք ըզմահ, իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան, փառք'':

Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմըք կենդանիդ յաւիտենից Քրիստոս, ընկալ և զմերս, փոխանակ խնկոցըն զօրհնաբանութիւնս: Փոխանակ սուրբ աւետաւոր զուարթնոյն, զբթութիւն քո մեզ հանդիպեսցի յուսով գիտութեան, մբխիթարել զհոգիս և լուսաւորել: Ընդ նոսին աւետարանութեամբ քարոզեսցուք զքո միայն զսքանչելիսդ, որ յարեարդ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ:

Որ անճառ էութեամբ հօրդ ես փառակից, չարչարիլ մարմնով յանձն առեր վասըն մեր, մշտընջենաւոր օրհնութեամբ ի հրեշտակաց օրհնեալ ես տէր: Որ էակդ ես ընդ հօր և սուրբ հոգւոյն, խաչեցար և թաղեցար կամաւ հօր վասն մեր, մշտընջենակեաց'': Որ միւսանգամ գալոց ես հայրենի փառօք, շնորհելով աստուածապէս յարութիւն Տիեզերաց, յամենայն արարածոց յաւիտենից օրհնեալ ես տէր:

ԽԶ. Որ զանարատ բազուկըս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, և նըշան յաղթութեան ետուր մեզ, սովաւ զկեանըս մեր պահեա: Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած, գաւազան զօրութեան ետուր մեզ, սովաւ'': Որ զմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւն կենագործեցեր, սովաւ'':

Փառք հօր և որդւոյ'.— Այսօր հրեշտակըն լուսափայլ ի յերկնից իջեալ, զարհուրեցոյց ըզպահապանսն, և սուրբ կանանցըն քարոզէր ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Այժմ և միշտ եւ յաւիտեանս'.— Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս, ազատեալք արեամբ զառինն Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

—. —

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

Աձ. Գովեա Երուսաղէմ զՏէր,
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց Ալէլուիա,
Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն Ալէլուիա:
Փառք հօր և որդւոյ'': Այժմ և միշտ և'':

Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա, որ զաշխարհս լուսաւորեաց ալէլուիա:

Ա.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
ԿԷՐՋ 7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԿԱՐԴԱ ԵՒ ՉՊԻՏԻ ՁԼՁԱՍ

Կ՚ուզե՞ս որ ամէն ժամանակ և ամէն պարագայի տակ անգլիերէն բառերու համար չի նեղուիս. գնէ մէկ հատ Փրոֆ. Յ. Յակոբեանի գրպանի Անգլիերէնէ Հայերէն բառարանէն, որը պատրաստուած է յարևնման Ուէպսդրի «The Metropolitan West Pocket» բառագրքոյկին և Standard բառարանին բառերուն ամենանիւտ և նորագոյն նշանակութիւնները դրուած են։ Չիկայ ոևէ բառարան մը որ ասոր նման յարմարութիւն ունենայ գրպանիդ մէջ կրելու առանց նեղութեան։ Հատ մը ապահովէ քանի սպառած չէ։

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

ԸՆԴԱՐՁԱԿ ԳՐԱՑՈՒՅԱԿ ՁՐԻ ԿԸ ՂՐԿՈՒԻ

H. G. BERBERIAN

P. O. Box 34, Sta., A.

Boston, Mass.

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

«Ազգային գրադարան»
NL0156084